Էրիկ Դավթյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 3-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ բ. գ. դ., պրոֆ. Գ. Քեռյան
էլ. փոստ՝ komitas2010@gmail.com

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Արցախյան պատերազմը հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի ամենակարևոր փուլերից էր, որը էական նշանակություն ունեցավ նորանկախ Հայաստանի Հանրապետության համար: Արցախյան ազատագրական պատերազմը իր հետ բերեց մի շարք խնդրահարույց հիմնահարցեր, որոնք իրենց տեղն են գտնում Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ:

Այդպիսի կարևոր հիմնահարցերից է Արցախյան պատերազմի ընկալումը արտասահմանյան զանգվածային լրատվության միջոցների, բնակչության և մտավորականության շրջանում թե՛ պատերազմական գործողությունների ժամանակ, թե՛ դրանից հետո և մեր օրերում: Արցախյան պատերազմի, խաղաղ կարգավորման գործընթացի մասին հնչել են բազմաթիվ կարծիքներ, տեսակետներ, եղել են տարատեսակ վերլուծություններ ու վերաբերմունք, ուստի փորձենք անդրադառնալ դրանցից մի քանիսին, որպեսզի ընդհանուր պատկերացում ձևավորվի առ այն, թե ինչպես է մտածում աշխարհը այս կարևորագույն հարցի շուրջ:

Նախ և առաջ հարկ է ընդգծել, որ խնդրի շուրջ տեսակետներ են հնչել աշխարհի տարբեր անկյուններից: Այսպես, օրինակ, Արցախյան պատերազմի ու Արցախի ճակատագրի մասին ամենահամարձակ հայտարարությունը թերևս արել է Ուրուգվայի արտաքին գործերի նախարար Ալմագրոն՝ 2011 թ. հայտարարելով, որ *«Արցախը պետք է միանա Հայաստանին: Դա է Արցախյան հիմնահարցի միակ լուծումը»*[1]:

Այս տեսանկյունից ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում աշխարհի հզորագույն տերությունների մամուլում տեղ գտած հոդվածներն ու մեկնաբանությունները, որոնք ունեն ընթերցողների շատ ավելի մեծ շրջանակ և ազդեցության ավելի մեծ արդյունավետություն ու լծակներ, քան ավելի փոքր երկրների մամլո անցուդարձերը: Այսպես, օրինակ, բրիտանական հայտնի «Guardian» թերթում 1999 թ. հոդված էր տպագրվել Վազգեն Սարգսյանի մասին՝ նույն թվականի հոկտեմբերի 27-ի իրադարձությունների կապակցությամբ, որտեղ վարչապետը անվանվում էր «կատաղի ազգայնական», իսկ Արցախյան պատերազմին առնչվող մասում նշվում էր *«... Նրանք* (հայկական ջոկատները - Է. Դ.) *զավթեցին ադրբեջանաբնակ Շուշի քաղաքը, ապա՝ Աղդամը՝ ադրբեջանական հարթավայրերի վրա գտնվող մի քաղաք...»*[2]: Այս տողերը ակնհայտորեն այնպիսի տպավորություն են թողնում ընթերցողի վրա, որ Հայաստանը զավթողական պատերազմ է սկսել Ադրբեջանի դեմ, իսկ վերջինս զոհի կարգավիճակում է և Արցախն էլ՝ ադրբեջանական տարածք:

Ամերիկյան «New York Times» թերթում 1992 թ. հուլիսի 8-ին հոդված էր տպագրվել Արցախյան պատերազմում լարվածության ուժեղացման ու ռազմական գործողությունների սաստկացման մասին, որտեղ նշվում էր. *«... Հայերի համար նրանց պայքարը եզակի էր ու արդարացի... Բայց ադրբեջանցիները ևս այն դիտում են որպես նույնքան եզակի ու արդարացի...»*[1]: Սրանով թերթը ակնհայտորեն հավասարություն է դնում կողմերի միջև: Նույն թերթի 1993 թ. օգոստոսի 2-ին տպագրված հոդվածում կան որոշ վկայություններ պատերազմի ընթացքում Արցախում ապրող մարդկանց կողմից, ովքեր պատմում էին, թե ինչպես էին ադրբեջանական ուժերը ռմբակոծում Ստեփանակերտը և այնտեղ ապրող խաղաղ բնակչությանը[2]: Արցախյան պատերազմում հայ մարդու, զինվորի, հայ մոր ապրումները ու կրած ծայրահեղ դժվարությունները օտարերկրացիների համար ավելի հասկանալի ու ընկալելի դարձնելու տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նույն «New York Times»-ում 1994 թ. ապրիլի 16-ին տպագրված հոդվածը, որտեղ տեղ են գտել հարցազրույցներ պատերազմի ականատեսներից և ազատամարտիկների ընտանիքի անդամներից[3]:

Արցախյան պատերազմի վերաբերյալ հետաքրքիր հոդվածներ են ի հայտ եկել ռուսական գրականության մեջ: Դրանց մեջ առանձնանում են ռուսական մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի (Комитет российской интеллигенции «Карабах»- КРИК) հիմնադիր Անդրեյ Նույկինի հոդվածները, որոնք աչքի են ընկնում ինքնատիպ բնութագրումներով: Այսպես, օրինակ, նրա հոդվածներից մեկում նա փորձում է ցույց տալ ռուս հասարակությանը, որ Արցախի համար պատերազմը Ադրբեջանի համար միայն տարածքի հարց չէ: Նա հանգամանորեն նշում էր, որ թուրքերը դեռևս չեն հրաժարվել պանթուրքիզմի գաղափարախոսությունից ու նրանից բխող «Մեծ Թուրանի» գաղափարից: Նույկինը նշում է, որ գրավելով Արցախը՝ նրանք ցանկանում էին Մեղրիի շրջանով ու Նախիջևանով կապվել Թուրքիայի հետ, որից հետո հնարավոր կլիներ վերջինիս համար Կասպից ծովով կապվել Ռուսաստանի իրենց եղբայրների, Թուրքմենստանի ու մնացած երկրների հետ: Մյուս կողմից՝ Հայաստանը ընդհանրապես կկտրվեր Իրանի միջոցով արտաքին աշխարհի հետ կապվելու հնարավորությունից: Նույկինը այստեղ շոշափում է նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության կարևոր սկզբունքները Անդրկովկասում՝ փորձելով ահազանգել, որ իրենց հարավային սահմաններում «մի նոր կայսրության» հեռանկարներ են բացվում, ուստի կոչ է արել սատարել Արցախյան պատերազմում մարտնչող հայկական զինված ուժերին և թույլ չտալ Արցախի հանձնումը թուրք-ադրբեջանական ընդհանուր բլոկին, քանի որ Արցախն է միակ տարածքը, որ կարող է կանխել թուրքական էքսպանսիան դեպի Արևելք[4]: Իհարկե, Նույկինը ավելի շատ խոսում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության ու ազգային անվտանգության տեսանկյունից, բայց այսպիսի հոդվածով անկասկած ամենադրական դիրքորոշում է ձևավորվում Հայաստանի ու նրա մղած ազգային-ազատագրական պատերազմի մասին:

Արցախյան պատերազմին հանգամանորեն անդրադարձել են ֆրանսիական զանգվածային լրատվության միջոցները: Ընդհանրապես ֆրանսիական մամուլում շատ են անդրադառնում այս հիմնախնդրին՝ սկսած պատերազմի առաջին բռնկումներից մինչև այսօրվա եռակողմ նախագահական հանդիպումները և հարցը խաղաղ ճանապարհով լուծելու փորձերը, ինչը մի կողմից պայմանավորված է Ֆրանսիայում հայկական մեծաքանակ հայկական համայնքի առկայությամբ, մյուս կողմից այն

---

[1] Տե՛ս http://pa.globedia.com/canciller-almagro-nagorno-karabagh-parte-armenia:
[2] Տե՛ս http://www.guardian.co.uk/news/1999/oct/29/guardianobituaries.jonathansteele1?INTCMP=SRCH:

[1] Տե՛ս http://www.nytimes.com/1992/07/08/world/in-the-caucasus-ancient-blood-feuds-threaten-to-engulf-2-new-republics.html?pagewanted=all&src=pm:
[2] Տե՛ս http://www.nytimes.com/1993/08/02/world/war-in-caucasus-shows-ethnic-hate-s-front-line.html?pagewanted=2:
[3] Տե՛ս http://www.nytimes.com/1994/04/16/world/war-blockade-and-poverty-strangling-armenia.html?pagewanted=all&src=pm:
[4] Տե՛ս http://forum.openarmenia.com/topic/8684-%E2%80%9C%D0%BD%D0%B0-%D0%BF%D1%83%D1%82%D0%B8-%D0%BF%D0%B0%D0%BD%D1%82%D1%8E%D1%80%D0%BA%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D0%B2-%D0%BD%D0%B0%D1%81%D0%BC%D0%B5%D1%80%D1%82%D1%8C-%D1%81%D1%82%D0%B0%D0%BB-%D0%BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85%E2%80%9D/:

հանգամանքով, որ Ֆրանսիան Արցախյան հիմնահարցով զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահող պետություններից մեկն է՝ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի հետ միասին: Օրինակ՝ «Le monde diplomatique» թերթում 1992 թ. ապրիլին տպվել էր մի հոդված, որտեղ անդրադարձ էր կատարվում Թուրքիայի ներքաղաքական իրադարձություններին՝ կապված Արցախյան պատերազմի հետ: Նշվում է, որ պատերազմը զգալիորեն թուլացրեց Թուրքիայի արտաքին քաղաքական դիրքերը Ասիայում. անհանգստություններ են սկսվել ժողովրդի շրջանում և հեռուստատեսությամբ մեծ ուշադրություն է դարձվում պատերազմական գործողություններին[1]: Այսպիսով, փորձ է արվում ընդգծել Արցախյան պատերազմի կարևորությունը թե՛ Անդրկովկասի, թե՛ Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերություններում: Նույն «Le monde diplomatique» թերթում 1993 թ. օգոստոսին տպագրվել է մեկ այլ հոդված, որտեղ ներկայացվում է ադրբեջանական ներքաղաքական ծանր կացությունը, որ ձևավորվել է պատերազմում կրած պարտությունների արդյունքում, և Հեյդար Ալիևի իշխանության գալը[2]: Մեկ այլ հոդվածում եվրոպական ընթերցողին է ներկայացվում Հայաստանի տնտեսական դրությունը, որի մեջ ընկել է Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից շրջափակման մեջ հայտնվելուց հետո, և շեշտվում է այն հանգամանքը, որ այդ պատճառով հաղորդակցության հիմնական ուղիները և ապրանքաշրջանառությունը իրականացվում են գերազանցապես Ռուսաստանի հետ[3]:

Արցախյան պատերազմին առնչվող հոդվածներ կան նաև իսպանական մամուլում: Դրանցից է, օրինակ, «Vega Media Press»-ում անգլիացի հայտնի բարոնուհի Քերոլայն Կոքսի հարցազրույցը, ով 1986-2006 թթ. եղել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության պառլամենտի Լորդերի պալատի փոխխոսնակը և բազմիցս եղել է Արցախում: Կոքսը պատմում է, թե ինչպես է առաջին անգամ եղել Արցախում՝ դրվատելով հայ ազգի քաջությունն ու կորովը, ազգային արժանապատվությունը, և անառարկելիորեն հանդես գալիս Արցախի անկախության ճանաչման կողմից[4]: Ըստ էության՝ բարոնուհի Կոքսը Արցախի հարցում հայանպաստ դիրքորոշման պաշտպանության ամենախոշոր առաջամարտիկներից է և բավականաչափ լայն ու բազմաբնույթ գործունեություն է ծավալում Արցախյան հիմնահարցում Հայաստանին ու հայ ժողովրդին սատարելու գործում:

Արցախյան պատերազմին, ռազմական գործողություններին և Հայաստանում ու Ադրբեջանում այդ ժամանակվա քաղաքական դրության ու փոփոխությունների մասին բազմաթիվ հոդվածներ ու վերլուծություններ են տպագրվել նաև շատ այլ հեղինակավոր պարբերականներում ու թերթերում, ինչպես նաև ներկայացվող նյութում հիշատակված աղբյուրներում: Համանման հոդվածներ սկսեցին տպագրվել ռազմական գործողությունների բորբոքումից հետո և շարունակվում են մինչ օրս:

Ընդհանուր առմամբ պատերազմի մեկնաբանումը արտասահմանում շատ կարևոր նշանակություն ունի: Առանց դրա էլ քիչ ռեսուրսների տիրապետող Հայաստանի համար հույժ կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե ինչպես է ընկալվում ամբողջ աշխարհում հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի ամենակարևոր իրադարձություններից մեկը: Այս հիմնահարցը ըստ էության կազմում է Հայաստանի Հանրապետության արտաքին քարոզչության ամենակարևոր բաղադրատարրերից մեկը:

---

[1] Տե՛ս http://www.monde-diplomatique.fr/1992/04/GRESH/44295:
[2] Տե՛ս http://www.monde-diplomatique.fr/1993/08/DOLAY/45497:
[3] Տե՛ս http://www.monde-diplomatique.fr/1994/02/GUEYRAS/206:
[4] Տե՛ս http://vegamediapress.com/publicacionanterior/vegapress/noticias/index749c.html?option=com_content& task= view&id=10293&Itemid=233:

Эрик Давтян

АРЦАХСКАЯ ВОЙНА ГЛАЗАМИ ИНОСТРАНЦЕВ

В данной работе представляется Арцахская (Карабахская) война в международной прессе. Во время войны знаменитые газеты разных стран опубликовали статьи о военной ситуации в регионе, о боевых действиях и о сущности этой войны. Иностранцы осведомляются об Арцахской войне, читая интерпретации самых знаменитых газет мира. С этой точки зрения правильное представление боевых действий и сущности войны имеют большое значение для армянского народа.

Erik Davtyan

ARTSAKH WAR IN VIEW OF FOREIGNERS

This research presents the activity of some foreign press agencies that have printed a lot of articles on Armenian-Azerbaijani war and made comments on it. This issue is very important because the international society was able to get information about the war only through the newspapers. That is why each statement made by those agencies is essential to form a real concept among foreigners about the essence of the war from 1991 to 1994. The research presents the articles generally printed in Great Britain, United States, France, Russia and some other countries. The topic is actual nowadays from the aspect of Armenian propaganda. It is one of the most serious challenges that Armenia has faced. The point is that Armenian-Azerbaijani war has not always been presented to international society as it must be. This research presents some quotes from the most famous and widely spread news agencies of the world about Artsakh, Artsakh war, military actions and political situation of Armenia and Azerbaijan during the war.